

ՀԱՅԻՂԻ տարեկան գինը 10 դրան, կէս տարեկանը 6 դրան: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուրլի կէս տարեկանը 5 ֆր. կամ 2 բուրլի:

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևալ հասցեով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱԽԻՂ

«ՇԱԽԻՂ» ԼՈՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Գ Ր Ա Կ Ն Ա Կ Ա Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Շ Ա Ք Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԲԱՅԻՆԸ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹԻՒ

Գ. ՏԱՐԻ „ՇԱԽԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Կը հրատարակվի Թեհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով: «Շախիղ» բաժնորդագրին է Պարսկաստանի համար մէկ թուական. կէս տարեկանը վեց դրան: Արտասահմանի համար 3 բուրլի կամ 8 ֆրանկ. կէս տարեկանը 2 բուրլի կամ 5 ֆրանկ:

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկուեն անպատճառ հետևեալ հասցեով: Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրում է ուշք դարձնել հիշտ այս հասցեով և առանց մի բառ մոռանալու ուղարկել զրամները, այլպէս չեն ընդունուի: Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթագրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները:

Ապառիկ բաժնորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում:

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

Խմբագրութիւնը ունի գործակալներ հետևեալ տեղերում:

Կովկասում.—Թիֆլիս՝ «Մուրի» խմբագրութեան մէջ պ. Յ. Յակովբեան. պ. Խ. Արզումանեան: Բաթում.—պ. պ. Գ. Գրիգորեան, Ստեփան Բէլոսեան: Բաղու.—Տալաւան «Արօթ», Որդիք Բ. Արզումանեան: Բալասանի.—պ. Բալասի Ա. Գաբրիէլեան: Կարս.—պ. Աբէլ Ապրեսեան: Զուլի.—պ. Թումաս Մահմեդեան: Ալաշքալաք.—պ. Զաւարժ. Գրիգորեան: Օրդուս.—Որդիք Բ. Արզումանեան: Եւրոպա. Ռուսերը.—պ. Փ. Հաղբեան: Պարսկաստանում.—Սալմաստ պ. Յ. Ապրեսեան (Երաւայք Ս. Արզումանեան) Երզրաբիլ՝ պ. Յակովբէլէլեան: Նոր-Ջուղայ՝ պ. Յովսէփ Բարսեղեան: Բուշիք՝ պ. Գ. Զէյթունեան: Ռաշտ և Էնզելի՝ պ. Ալեքսան Յովսէփեան: Մարագա՝ պ. Մեղրոն Խալափեան: Դավրէժ՝ Ընթերցասիրաց Գրագ. ընկ. խանութ. Համաստ պ. Յակովբէլ Յակովբեան:

Գործակալ չեղած քաղաքներից բաժնորդագրին կարելի է ուղարկել պարսկական նամակադրոշմներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական հարդի մասին. Դա օգուտ չէ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՄՆՈՒԹԻՒՆ. Մի մոռացած ժողովուրդ. նամակ Արտաքիլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄՆՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն.—ՆԵՐՔԻՆԻՆԵՐ. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կերպարանափոխութեան ազդեցութիւնը գիտութիւնների վրայ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԿԵՐԳԱՐԱՆԱՓՈՒԹԵԱՆ ԱԶԻՅՈՒԹԻՒՆԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ (Գիտական գրոյցներ) (Տես Ջաւիղ № 35)

Անցեալ յօդոածում յառաջ բերած Կանաչապատեան տեսութիւնից հետեւում է, որ աշխարհները կազմող նիւթը յաւիտեական պտոյտի և կերպարանափոխութեան մէջ է: Նա որոշ քիմական բաղադրութեան միջոցով աշխարհներ է ստեղծում և ներդաշնակ կերպարանք ընդունելով՝ դէպի կատարիազորութիւն է ընթանում: Սակայն այդ բաղադրութեան լուծման հետ նա կրկին ստանում է իր քառասական վիճակը և գործողութեան մի նոր շրջան է սկսում:

Նիւթը, որ աշխարհի փոփոխական երևոյթների անփոփոխ հիմքն է կազմում և ամբողջ տիեզերային տարածութիւնն իր ասօմիներով (հիւլէ) ամենափոքրիկ՝ և գէթ մեղ համար՝ անբաժանելի մասերով լցնում.—չի կարող

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

...Սուլթանը բողոքել է ռուսական աւստրիական, ֆրանսիական և գերմանական կառավարութիւններին, որ չը պնդեն պահպանաւորի կրկնապատկե-

նույնալ. նոյնպէս մեղ համար աներեւակայի է՝ նրա սննդից առաջ գալը: «Ոչինչ բան» իրականութեան մէջ գոյութիւն չունի: Նա միայն մի «որոշ բանի» բացատրութիւնն է, որի հետ մի և նոյն ժամանակ մի «որիշ բան է» վտածվում՝ առանց արտայայտելու. օր. երբ մէկին հարցնում էք.—Ի՞նչ էք անում.— և նա պատասխանում է՝ «ոչինչ».—նա ուղում է դրանով ասել, որ այդ բոլորին «որոշ» աշխատութեամբ չէ զբաղւած, այլ ծիւղում, հանգստանում, պառկում է և այլն:

Քիմիական փորձերը ցոյց են տալիս, որ նիւթը յաւիտեական է: Իւրաքանչիւր կերպարանաւորում քայքայվում է և տարրերի է լուծվում, երբ նրա վրայ ազդող պայմանները նրա գոյութեան շարունակելուն արգելադրութիւն չեն լինում. իսկ անջատւած տարրերը՝ ըստ իրենց բաղադրութեան և յարաբերութեան ուրիշ տարրերի հետ միանալով՝ նոր կերպարանաւորումներ են կազմում: Փոփոխումը դատարելիս՝ մարդս մեռնում է. որով և կանգ է առնում բոլոր կեանքի գործողութիւնը. սակայն մեռած մարմնի ոչ մի փոշի չի ոչնչա-

լու խնդրի վրայ: Իշխան Լօբանով, ռուսաց արտ. գործոց նախարարը յանձն առաւ զանազան կարենեաների միտքը հասկանալ այդ մասին և աննպաստ պատասխան ստանալով՝ յայտնեց Բ. Դրան թէ ինքը չէ կարող բաժանել միւս պետութիւններից: Կոմս Գոլուխովսկին, արտ. գործոց նախարարը պատասխանելով շեշտեց այն կէտի վրայ թէ համաձայնութիւն էր տիրում պետութիւնների մէջ և նրան՝ Սուլթանին խորհուրդ տաւ բաց թողնել իր ձեռքը գող քաղաքականութիւնը:

Ռէյտեր.

Նոյ. 17-ի երեկոյեան Լանդոնում տեղի է ունեցել վեց գլխավորների խորհուրդը Սուլթանի մօտ, ալ. գործոց նախարարութեան մէջ: Ներկայ է եղել նաև Սիւսեալ նահանգների ղեկավարը:

Daily Chronicle.

Նոյ. 19-ին հինգ գետնաշնորհը հաւաքւել են նոյն Կամբոնի մօտ դատելու և վճռելու համար այն վերջնական միջոցները որոնց գործադրելու համար պիտի խորհուրդ տրւի Բ. Դրան, Անատոլիայում կարգը վերահաստատելու համար:

Ռէյտեր.

Պետութեան ներկայացուցիչները լայն տարածել են Բ. Դրան որ նրանք պատասխանատու չեն հետեւեալների համար, որ կարող են առաջ գալ, եթէ Զէյթունի առնելուց յետոյ կոտորած լինի հայերի մէջ:

Times

նում, այլ նա լուծվում է և իրեն կազմող տարրերը—թթւածին, կրածին, ածխածին և այլն—ցրվում են: Եթէ յաջողի այդ տարրերը կրկին հաւաքել և կշռել, այն ժամանակ նրանց կշիռը հաւասար կը լինի մարմնի ունեցած ծանրութեան:

Յիշում եմ՝ ինչպէս մի անգամ մի քիւրդ գիւղացի իրենց յատուկ բնական սրտմոտեթեամբ՝ ասում էր. «Փայտը օր այրում ենք, չի ոչնչանում, ոչ էլ պակասում է, այլ լուծվում է միայն և նրա մասերը ուրիշ ձևի տակ իրենց գոյութիւնը շարունակում են.—ծուխը միանում է օդի հետ, մոխիրը հող է դառնում և բոցը բարձրանում է դէպի արև որակից նա ճառագայթի կերպարանքով մտել էր հողից սնուղ և օդում ապրող ծառի մէջ»: Երեւում է այդ քիւրդ փիլիսոփան հին յունական քիմիական սկզբունքներովն էր փորձում իրեն շրջապատող իրերի բացատրութիւնը տալ: Ըստ հին յոյների կային միայն չորս տարրեր. հուր, ջուր, օդ և հող, որոնց բաղադրութեան եղանակից առաջ էին գալիս մարմինների և իրերի ամեն տեսակ կերպարանաւորումը: Սա-

«ՇԱԽԻՂ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լուրով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի: Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Redaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

Քրիստոնեաների նոր կոտորածներ են տեղի ունեցել Սլոթափում:

Ռէյտեր:

Հայ աղոտածրները նոյ. 1-ին յարձակում գործեցին մահմետական զիւղերի վրայ Զէյթունում, կողոպտեցին և այրեցին տները: Ուղարկւած են այնտեղ զինուորական բոլոր վաշտերը:

Corr-Bureau

Քրիստոնեաների դէմ եղած թշնամական շարժումը տարածվում է Սիրիոյ հիւսիսային կողմերը: Յայտնում են նոր կոտորածների մասին նոյ. 6-ից, Ալէսպոյի շրջակայքներում:

Ստեփանի հեռ. գործ.

Նոյ. 11-ի երեկոյեան Սթէնքի Համալսարանի ուսանողները, որոնց կէսը Թիւրքիայի լոյսեր էին, կազմեցին մի մեծ միտինգ յօդուտ Յունաստանի աշխուժով միջոցներ ձեռք առնելուն Արեւելեան հարցում: Ուսանողները թափօր կազմեցին. թաղաթառանգը ընդունեց պատգամաւորութիւնը և պ. Գեղեանին առաջին նախաշարք խորհուրդ տւեց հանգարտել և կառավարութեան թողնել սոցիալիկական գործառնութիւնը: Ուսանողները շարունակեցին ստորագրութիւնը ժողովել դէնք ձեռք բերելու համալսարանական գունտի համար: Ի նկատի ունենալով կառավարութեան դրամական դժուար կացութիւնը, ստորագրութիւն է բացել նաև նոր ձևի հրացաններ ձեռք բերելու: Այդ բոլորը լուծում է առաջացրել Թիւրքիայում և հաւանական են համարում մի ընդհա-

յայն այժմեան քիմիան ճանաչումէ 75 հասարակ (այսինքն՝ այլիս չը լուծող) նիւթեր, որոնք կազմում են տարրեր: Այս տարրերը հաւասար պէս միմեանց հետ չեն խառնվում, այլ ունեն մասնիկային զանազան ասփիճանի ձգողական յարաբերութիւն. երբ նրանք գազանման կամ հեղուկ դրութեան մէջ շփվում են միմեանց հետ՝ որոշ յարաբերութիւն ունեցողներն են միայն բաղադրվում:

Յունական 4 տարրերը հասարակ նիւթեր չեն, այլ բաղադրւած են ուրիշ հասարակ նիւթերից, այժմեան ընդունւած տարրերից. օր. ջուրը կարելի է լուծել ջրածնի և թթւածնի:

Ինչպէս նիւթը՝ նոյնպէս և ոյժը անանցանելի է: Ոյժը առանձին գոյութիւն չունի, այլ միշտ կապւած է նիւթի հետ. փոխադարձաբար և նիւթը առանց ոյժի գոյութիւն չունի. կարելի է ասել, որ վերջինն առաջինի յատկութիւնն է ներկայացնում: Օդում ճոճող նիւթի ամենափոքր փոշին ևս ունի իր ձգողական և վանողական ոյժը: Առանց այդ ոյժերի աշխարհում աներեւակայի է նիւթի կեր-

նուր պայթումն: Կրէտէում նոյնպէս գործերի գրութիւնը ծանր է: Կարատէօ-գորի փաշան, կղզու կառավարիչը, խոստովանում է վտանգը և իր ընտանիքը կղզուց դուրս է հանել վերահաս լեզա-փոխութեան վտանգից:

Times.

Նոյ. 17-ին պաշտօնադէպ հաղորդվում է մի հայի ձերբակալութիւնը: Նա հաղնաւած է եղել արաբի հաղաւտով և ունեցել է մի նամակ ուղղւած մի հայ եպիսկոպոսի Մարաշի եպիսկոպոսի կողմից, ի միջի այլոց նամակի մէջ եղել են հետեւեալ խօսքերը. «Վառօղ ուղարկեցէք Ձեթունի ապստամբներին, որ կարող լինին դիմադրելու շարունակել: Ուղարկեցէք նաև վառօղ շինելու պարտաւաններ: Ձեթի թունում ամբողջ բանակ կ'որդէի է կազմել: Մարաշի ամբողջ հայերը պատրաստ են և օրէցօր սպասում են զոր-ծի սկսելուն»:

Times

Պարիզի հայերը դիմել են Պրանսական հասարակագիտութեան նախագահին, հրաւիրելով նրան հայոց հարցին նպաստելու այսպիսի խօսքերով. «Հայ պզգը ճգնաժամի մէջ իր հայկացիքը դարձնում է դէպի Պրանսիան, որին նա միշտ սիրել է և ուժով հաստատ համոզւած է որ աղքատները ազգը երբէք չի մերժիլ իր հովանաւորութիւնը ճնշող ժողովրդի վրայ պարզելուց և չի մերժիլ թշաւահային, որ իր տանջանքներով արժանի է ուշադրութեան»:

Times

Վ. Պոլսում տարածւած են շատ այլազան լուրեր: Օրինակ. իբր թէ սուլթանը Ռուսաստան է ուղարկել իր փաշաներից մի քանիսը, խնդրելու համար ռուսաց կայսրից որ նա Վ. Պոլսի ուղարկէր ռուսական զօրք իրեն օգնելու:

Млада Болгария

Քաղաքներ ռուսաց պաշտօնական, Моск. Вѣд. թերթից:

Վերջերս այդ թերթում երևան են

պարսկալեզու և համախմբող ընդունակութիւնը, (նրա հիւլենիքի (ատոմ) ուղիքանման շարժումներից առաջացած քիմիական և ուրիշ բնական գործողութիւնների կատարումը:

Ոչ թի փոխարկութեան և կերպարանափոխութեան գիտութիւնը կոչվում է ֆիզիկա: Այս գիտութիւնը մեզ ծանօթացնում է ութը տարբեր ուժերի հետ--ծանրութիւն, առաքութիւն, լույս, միջինական ուժ, ելիքարակաւութիւն, մագնիսականութիւն, կցողութիւն (Cohesion) և խնամութիւն (affinité): Այս ուժերը զանազան արտայայտութեամբ ամփոփվում են տիեզերային տարածութեան վրայ սփռւող բոլոր մարմինների մէջ--տարածութիւնը և լույսը տրեգակաների, մեքենական ուժը՝ արեգակների շուրջը պտտող մոլորակների, մագնիսականութիւնը, կցողութիւնն ու խնամութիւնը՝ առողջերը կազմող նիւթերի մէջ:

Հետևեալ օրինակը թող հաստատի, որ ուժը չի ունենում, այլ ընդունակ է փոխարկութեան և կերպարանափոխութեան շրջան անել՝ առանց իր քանակութիւնը պակասեցնելու: Քիմիական նիւթերը այրելով կամ հաշտեցնելով յառաջ է գալիս տարածութիւն և լույս, տարածութիւնը չսփռւած միջինային միջոցով մե-

կել երկու թղթ աւելցնել, մէկը, X. ստորագրութեամբ, միւսն էլ «Բէկ», որոնք շատ հետաքրքիր լուրեր են հաղորդում Վ. Պոլսից: Իսկ ինքը թերթը ահա թէ ինչեր է խօսում վերջին օրերս հայոց կաթողիկոսի Նելիտովին ուղարկած նամակի առթիւ:

«Արձադատք լրագրից եղծածնից ստացել է հոկտ. 28-ի մի հեռագիր, որ յայտնում է թէ ն. Սրբութիւն ամենայն հայոց կաթողիկոսը ուղարկել է Վ. Պոլսի ռուսաց դեսպանին մի հեռագիր այսպիսի բովանդակութեամբ. «Շուրաւ տնայնացի կոտորածներից որոնք լինում են Վ. Պոլսում, Տրապիզոնում և ուրիշ տեղեր, դիմում եմ ձեր գերազանցութեան խնդրելով հաղորդել ինձ թէ ինչ դրութեան մէջ է իմ եկեղեցին Թիւրքիայում և Վ. Պոլսի իմ ներկայացուցիչ պատրիարքը: Սրա հետ միասին ևս հեռագրում եմ պատրիարքին որ իմաց տայ թէ ինչու այսքան երկար ժամանակ է որ նրանից տեղեկագիր չեմ ստացել եկեղեցու և ազգի գրութեան վերաբերութեամբ... Երբեք ինչ է որ Մկրտիչ կաթողիկոսը հայերի թողաւորն է դարձել և ուղղակի լարաբերութեան մէջ է ռուսաց դեսպանի հետ, պահանջելով նրանից տեղեկութիւններ»: Թերթի լեւոն միտքը շատ հասկանալի է այս վերջին անմիտ խօսքերից:

Այժմ մի քանի քաղաքներ նոյն թերթի Վ. Պոլսի թղթակցից:

...«Ես տեսնեցի Ս... բէյ գեներալի հետ: Նա ելկոր մտածելուց լեւոյ լմ հարցի վրայ (հայոց մասին) ասաց-- Ձեզ լալանք է արգելք որ մեր կառավարութիւնը անգլիացիներին ծառայագիր է ուղարկել զատարկելու Եգիպտոսը:--Ոչ.

—Ուրեմն իմացէք որ ուղարկւած է ծանուցագիր. բայց որովհետեւ դա անգլիացի ճաշակին յամար չեղաւ, նրանք բնական ուժի է փախում և մեքենական ուժը կարող է կրկին շփուել՝ տարածութեան փոխել և ուրիշ տեսակ ուժի արտայայտութիւններով վերադառնալ իր ծնող աղբիւրը:

Նիւթի մէջ գտնւած ուժերի անվերջ կերպարանափոխութեան վրայ հիմնւած են բոլոր նիւթերի խիստ և անսասան օրէնքները: Բնական օրէնքները բացատրում են մեզ, որ մի բնական մարմին որոշ պայմանների ներքին որոշ փոփոխութեան է ենթարկվում: Այս օրէնքի վրայ հիմնելով բոլոր պատահարները և բնական երեւոյթները, որ դեռ չը հասունացած մարդկային միտքը հրաշքներ է համարում--կարելի է մեկնաբանել: Երբ հին ժամանակները (և ներկայումս էլ չը քաղաքակրթւած երկրներում) արեգակը խաւարում էր, մարդիկ կարծում էին, որ բարի ուղին կուլում է խաւարի, չոր ոգու հետ. բայց երկնադիտութիւնը յայտնում է մեզ նրա իրական պատճառը, որ լուսինը մեր երկրագնդի և արեգակի միջոցով անցնելիս՝ վերջինին մի առ ժամանակ ծածկում է և մեզ համար անտեսանելի անում, մինչև որ արեւ իր սե քողը վերցնում է և նորից իր բերկրային երեսը զարհուրած մարդկութեան ցոյց տալիս: Երկ-

եգիպտոսից ուշադրութեանը դարձնելու համար մի ուրիշ կողմ, ինչպէս և Ռուսների ուշադրութեանը Պամիւրից--մտածեցին հայոց հարցը մէջտեղ ձգել... Անգլիացիք վրայ թիւրքերը թշնամութեամբ են նայում և եթէ մի բան պատահի, չեն խնայիլ նրանց: Լսվում է որ լոյսները խնդիր են տւել սուլթանին որ թող տրուի նրանց՝ ոչնչացնելու բոլոր հայերին (Յի խմբ.): Բայց սուլթանը մերժեց: Հայերի գրութիւնը շատ վատ է, ոչ մի թիւրք նրանց չէ բարևում և հեւանում է նրանցից: Յոյներն էլ այդպէս են անում»:

Տեսնելով Թարջիմսնը Հաքիթթաթ յայտնի թիւրք լրագրի խմբագիր և թիւրքերի մէջ հռչակւած աղբիւրի գրագետ Ահմէտ Միդհատի հետ, թղթակցից ի միջի այլոց հարցնում է նրան թէ ինչ գաղափար ունի նա հայկական հարցի վերաբերութեամբ: «Հայոց հարցը--ասաց նա--հարց չէ, այլ, բարեւ, բացականչութիւն (восклицание)... Ահա թէ ինչ, պաշտօնակից, նախ քան մեր խօսակցութեան շարունակելը, յանուն ճշմարտութեան, խօսք տանք միմեանց որ չը պաշտպանենք ոչ թիւրքին և ոչ էլ հային:

«Հայոց հարցը--շարունակեց նա--շատ լաւ, հէնց այդպէս էլ կոչենք նրան. բարձրացրին անգլիացիները, որ ինչ որ էլ լինէր, կամենում են այտեղ էլ տարածել իրենց վնասակար ազդեցութիւնը: ...Ես չեմ ուրանալ և վիճիլ որ հայերին նեղացրին կամ սպանեցին: Շատ ճիշտ են այդ բոլորը և իմ կողմից յիշարութիւն կը լինէր ուրանալ այդ բոլորը: Բայց ասացէք խնդրեմ, թիւրքերին պակաս են ճնշում. նեղացնում: Եւրոպայում չը գիտե՞ն միթէ որ քիւրդերի հետ սուլթանի զօրքը ոչինչ չէ կարող տեսել... մի վայրենի ազգ է նա և նախնական դրութեան մէջ է գտնվում... Երկար դեռ թիւրք գրողը խօսեց նրա մասին որ անգլիացիք կարող են ներս

նագնանքը բնական օրէնքներով հաշուելով կարողանում են նոյնպէս կանխասել թէ՛ իբր մի այդպիսի երևոյթ տեղի պիտի ունենայ: Որոտումը և կայծակը մեզ համար այլ ևս խորհրդաւոր և գերբնական բաներ չեն. ֆիզիքան մեզ ասում է, որ կայծակը երկու հակառակ ելիքորակաւ ուժերի շփման արդիւնքն է. իսկ երբ կայծակը դրդեցնում է օդը՝ որոտումն է առաջ գալիս:

Երկրաբանութիւնն էլ բացատրում է մեզ բնութեան օրէնքներով կարողութեամբ՝ հրաբուխի և երկրաշարժի աւերիչ երեւոյթները: Երկրագնդի միջուկի մէջ ենթադրելով այրող և հնդուկ նիւթ՝ մարդ կը կարծէր թէ հրաբուխի այդ նիւթի հակադրեցութիւնն է, որ առանց արտաքին պատճառի պարբերաբար իր կեղևը ահաբիւն ուժով ջարդում ու դուրս է պոռթկում. բայց այդպէս չէ. երկրագնդի կեղևը աղբիւն այնքան հաստացել է, որ կարող է հնչաւութեամբ իր մէջ պարունակող աւերիչ զանգաւածը սանձահարել: Հրաբխային գործողութիւնը երկրագնդի ստուեր և խտանալու հետևանքն է: Երկրագնդի այրող միջուկը աւելի արագ է սառում և խտանում քան թէ արդէն սառած և խտացած կեղևը.

մտնել Թիւրքիայ Պարսից ծոցի կողմից Կարունի միջով և այնտեղից Վանի լահանգը 5 օրւայ ճանապարհ է: Միտհատ է քիւրդին ընդհանրապէս դէմ է Փոքր Ասիայում տիրող վարչութեան անկարգութեան և զգուշ հարստահարութեան»...

Իրանից յետոյ թղթակցից, ընկերանալով մի հայի հետ, գնում է հայոց ս. պատրիարքին տեսնելու: «Իմ ընկերը յայտնեց պատրիարքին մեր այցելութեան նպատակը: Պատրիարքի աչքերը բոցափայլեցին:

—Մի գրէք խնդրեմ որ ինձ մեռած տեսաք, ասաց նա.

—Ինչպէս.

—Շատ պարզ է. մի թղթակից գրել է որ Վ. Պոլսի անկարգութիւնների ժամանակ ես փախալ այնտեղից դէպի գիւղը և որ իմ պատրիարքաւորի գլխին ցուել էր անգլիական դրոշ. մինչ իսկապէս այդպիսի դրոշ չը կար, իսկ ես, հազիւ կենդանի, տանս մէջ վեր էի ընկել և սուսել և անգամ չէի կարողանում... Երկար խօսեց պատրիարքը... ինչում եմ միայն որ նա թիւրքերի գաղաւթութիւնների մասին պատմեց. նաև թէ ինչպէս հայերը շնորհիւ քրիստոնէութեան է որ պահպանվում են և սակայն չը նայելով դորանց՝ ոչ ոք չէ պաշտպանում նրանց, որ Անգլեան ոչ մի դեր չէ կատարում դրա մէջ և որ նա գործչունի նրանց հետ. որ նա խնդրում է միայն որ հանգիստ թողնեն իր ազգին և որ ոչ մի ազատ Հայաստան կազմելու միտք չը կայ և այլն և այլն»...

Ես ընկերացած էի Նոր-Դարի թղթակից պ. Մարսի հետ:

ԴԱՍՈՅՈՒՆԻՆ 25

«Տասնհինգ հազար հայեր կը թափառեն Կովկասին մէջ, անոնց հարկաւոր է խնամել» ասաց դեռ յունիս ամսում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր քա-

այնպէս որ մագմայով (magma) լցւած մի տարածութիւն է մնում երկուսի մէջ տեղը այդ պատճառով կեղևից ևս մասեր են ընկնում միջուկի հետ հաւասարելու. իւրաքանչիւր այդպիսի անկման շարժում իր ճնշումով մագմա և հրափրիւր է մօտեցնում մակերևոյթին և բարձր դրութեան մէջ պահում: Երկրագնդի մակերևոյթից ծծւած և գաղ ու շոգի դարձած ջուրը ամեն կողմից ճնշւած լինելով՝ չի կարող խոյս տալ. որով նա կլանվում է հրափրիքից և նրա մէջ ժողովում: Այս եղանակով նա հետզհետէ աւելանում է և շոգու խիստ առատութիւն է առաջ բերում, մինչև որ վերան բռնաւորւած ճնշումն այլ ևս չի կարողանում դիմադրել և ճանապարհ է տալիս նրա զօրաւոր հոսանքին: Կեղևի մասերի ընկղմումն պատճառ է նաև մեծ սարերի ու ժայռերի կազմակերպութեան: Հրաբուխի ժայթքման հարաւանները կեղևը շարժում են և երկրաշարժ առաջ բերում. յաճախ ևս երկրի խաւերի ղեկավարումը և խորշումը, որոնցից լեռներ են առաջանում--երկրաշարժն է պատճառում:

(Կը շարունակել)

կոյթները» ձեռք և ընտրել այնպիսի բաներ, որոնք չը ձանձրացնեն ժողովրդին և հասկանալի էլ լինեն. այդպիսի պրոգրամով երեկոյթները ձեռք վաղուց է որ վերացել է արդէն ամէն տեղերից:

Դեկտ 10-ին, Հայկազ. դպրոցի դահլիճում տեղի կունենայ մի երեկոյթ, որի ծրագիրը շատ բան է խոստանում: Երեկոյթը յօգուտ նոյն դպրոցի ազգային գրադարանին է: Պրոգրամը տալած է. լինելու են խմբական երգեր, երաժշտութիւն գործիքների վրայ, մոզական լատերով տեսարաններ և կենդանի պատկերներ: Կը լինի բիւֆէտ արանց և առանձին՝ կանոնաց համար: Տոմսակների գինն է 5-ից մինչև 1 դռան: Այդ առիթով երեկոյթի մասնախումբը խնդրում է մեզ յայտնել որ տպագրւած պրոգրամ մի վրայ աւելացրած են այլ և այն, որ Տիկին Կեոսուր և պ. Վ. Փափաղեան երգեսանի և ջութակի վրայ կը նւագեն Պուսի I prélude «Ave Maria» և պ. Ս. Մխիթարեանը կ'երգէ Ռշտունեաց երկրի մի օրօր: Զիաքարչի վարչութիւնից խնդրւած լինելով, երեկոյթը վերջանալու ժամանակ պատրաստ կը լենեն 3 վագոններ՝ Դարվազա Դովլաթցոյ համար:

Դավրէժից մեզ գրում են. «Հայաստանում կատարւած վերջին արեւնալից դէպքերի ժամանակ կոտորւած հայերի համար հոգեհանգիստներ կատարեցան այսուղի երկու եկեղեցիներում. Տեղ. Սարաճեան երկու տեղ էլ քարոզ խօսեց և յորդորեց ժողովրդին նիւթական օգնութիւն հասցնել տաճկահայ տառապեալ եղբայրներին: Ժողովարարութիւնը յանձնւած է մի քանի անձանց և ինչպէս լսում ենք, յաջող է ընթանում:»

Նոյն տեղից գրում են որ կիրակնօրեայ դպրոցը փակեց. ուսուցիչներից Սհան ջանեանը բոլորովին հեռացած լինելով, նորա դասերն էլ աւելի ծանրաբեռնւած լինելով մնացող Լիւսիւսի ուսուցիչների վրայ, չէին կարող տանել գործը, քանի որ ոչ տեղական երիտասարդներ մասնակցողներ կային և ոչ Ղալալի ուսուցիչները:

Մեզ գրում են Բուշերից, որ լուր է հասել այնտեղ թէ Եսայի եպիսկոպոսը նոյեմբեր 2-ին մեկնել է Կալիթալից դէպի Եջմիածին: Այդ մասին մեզ եղել է մի թղթակցութիւն ևս Կալիթալից, որը շատ պախարանօք է խօսում մեկնած սրբազանի մասին տալով մի քանի խղճալի փաստեր: Կաշխատենք յետագայ համարներից մեկում տպել՝ քիչ համառօտած:

Անգլիական թերթերը գրում են որ Կ. Պօլիս հասած փախստական հայերը գաւառներից թափւել են պատրիարքարան և հաց են խնդրում. սալսափելի սով է սպառնում ամբողջ Հայաստանին: Ասում են որ մեծ վէղերը պատրիարքին չի ընդունել մինչև որ նա չըջաբերական զուրս չը տայ և բոլոր մեղքը

հայերի վրայ չը ձգէ: Պատրիարքի դիրքը շատ դժուարանում է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐՏԻՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
(Չարունակութիւն տես № 44)

Մյն բոլոր վարպետութիւնները կամ կոլլեկտիւական դառնացանքները (delire) որոնք աճում ու մեռնում են ծառացող և փշրող աւերների պէս, իրենց աճելու և մեռնելու խիստ բնական պատճառներն են ունեցել որոնց պատմութեան իմաստասիրութիւնը երևան է հանել և ճգնում է զկտուրեան մի ճիւղի վերածել: Անող և մեռնող վարպետութիւնների և խմբական դառնացանքների մէջ մնացուն եղել են միշտ նրանք, որոնք արմար են եղել միջավայրին, ժամանակի ոգուն և նրա պահանջներին, որոնք կարողացել են լըպէս ջրի կաթիլներ ծառայել պապականոյ ամբոխին, որոնք այսպէս կամ այնպէս գոհացում են տրւել ոչ միայն մի որոշ ժամանակի ոգուն, այլ որոնք իրենց ղեկավարների վարպետութեան շնորհիւ ստացել են ճկունութիւն, հետեւել են պրօգրէսին և իրենց սկզբունքները դարբնել դաւանողների պահանջների համեմատ: Որ վարպետութիւնը կանգ է առել, նա ոչնչացել է իր մէջ բովանդակած հիւթի ցամաքելուց յետոյ: Քրիստոնէութիւնը իբր օրինակ կարող է ծառայել մեր թէղին (thèse): Ուսումնասիրելով այդ կրօնը իր աղբիւրից, հետեւելով նրա ընթացքին դարբնել միջով, գնահատելով նրա այլափոխութիւններն ու բարեփոխութիւնները, մարդ գտնում է որ ինչ որ նա էր I դարում, գրէթէ լիովին փոխւած է ներկայանում մեզ 18-րդ դարում: 18-րդ դար ասացինք և ոչ 19-րդ, որովհետև այդ դարում նա սկսում է անշարժութեան նշաններ ցոյց տալ: Եթէ քրիստոնէութեանը յաջորդել է 16-դար գոյութիւն ունենալ, դա ոչ թէ շնորհիւ իր հիմնական սկզբունքներին է, այլ իր պաշտօնեաների խելացիութեան, որոնք երկուր կռիւներ մղելուց յետոյ պահպանելու համար սկզբնական ձեռք, ստիպւած են եղել յարմարել ժամանակի ընթացքին և կերտել կրօնը մարդկային պահանջներէ վճռելիքային: Այդ նոյնը պատահել է զանազան ժողովուրդների մէջ զանազան այլ կրօնների հետ ևս և որ կրօնը որ ես է մնացել ժամանակի ոգուց, նա ընկել է նախ կասկածի, յետոյ հակավարժութեան և ապա մոռացութեան մէջ:

Վերցնենք իբր օրինակ այն հետգհետ ծնող միմեանցից տարօրինակ աղանդները, որոնցից շատերը արտայայտում են նրանց՝ ժողովրդի ցանկութիւններն ու պահանջները: «Revue des revues» ֆրանսական թիւթի խմբագիրը, իր հանդէսի մէջ թուում է այդ աղանդներից հետաքրքիրները և տալիս է նրանց մասին ամփոփ ու ճիշտ տեղեկութիւններ, որոնք ամբոխի հոգեբանութեան համար իբր ընտիր նիւթ կարող են ծառայել:

Այդ կրօնա—միստիկական աղանդները, որոնք սնկների նման բուսնում են Ամերիկայում և Ռուսաստանում, երբեմն այնպիսի այլաբանական վարպետութիւններ, այնպիսի սոսկալի ծէսեր էլ ունին, որ մարդ յաճախ կարծում է գտնել ամբողջ խենթացած խմբերի առջև: Վարպետութիւնը սկսում է մի անձից որ իրեն ներշնչւած է համարում

կամ հողին սրբից և կամ մի ոգուց, յետոյ նա սկսում է քարոզել իր ասածների վրա, գտնում է իր, վարպետութիւնից և ծէսերից վարակողների և ահա բաւական է կառավարութեան կողմից մի հալածանք՝ աւելի տարածելու համար նոր ծնած աղանդը:

Թւենք Ռուսաստանում վերջին տարիներս միմեանց ետեղի ծնող մի քանի աղանդներ որոնց պատմութիւնը բաւական հետաքրքիր կարող է լինել ընթերցողին:

Սկսենք խորհրդաւորներիցը
1) Բելոբիցի կամ սպիտակագեղացիներ. որ իր վրայ ուղարկութիւն հրաւիրեց 1895 ապրիլ ամսին Միսքիբսկում. նրա հիմնադիրն է մի գիւղացի—Պիսցով, որ բողոքում է այս աշխարհիս անարդարութիւնների դէմ, սպիտակ հագնելով «ոքալէս երկնքի հրեշտակները»: Մարդս չէ ապրում որպէս պէտք է, անփորձացնում է Պիսցովը. պէտք է ապրել ճշմարտութեամբ, զսպիտակ կրքերը: Մեր վարած կեանքը այսպէս տեսել չէ կարելի, այս աշխարհս պիտի ոչնչանայ և նրա ստերակների վրայ պիտի գոյանայ մի ուրիշ աւելի լաւ աշխարհ, որ բոլորը պիտի սպիտակ հագնւած լինեն, ինչպէս իրենք բելոբիցիները... խորհրդաւորութեան նիւթ է մատակարարում այդ այլաբանական վարպետութիւնը, որ նիւթականապէս աղանդ է գոյացրել. աղանդաւորները ապրում են համեստութեամբ և խոտակեր են, ոչ միս են ուտում և ոչ էլ ձուկ. չեն ծըլում, ոգելից ըմպելիք չեն գործածում և նոյն իսկ կաթից, թէլից և ձուից զրկում են իրենց. օրը երկու անգամ են ճաշում, ժամը 10-ին և 6-ին. իրենց հագուստի կտորը իրենք են շինում: Պիսցովը մի հարուստ վաճառական է եղել. մի օր, ներշնչւած, ծախել է ամեն ինչ և ընծայել, իրեն թողնելով միայն սպիտակ հագուստներ... նրա կարծիքով անասունները նոյնպէս տանջանք են զգում մորթւելիս, ուստի նրանց չը պէտք է կեանքից զրկել մեր կերակուրի համար...
Այս աղանդը մեծանում է հետզհետէ: Ներանց սկզբունքն է. «ոչ ոքի չարութիւն չանել, հանգիստ տալիւ, սպասելով լաւ աշխարհի, որ ամեն ինչ սպիտակ պիտի լինի...»
(Կը շարունակի)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ԲԵՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հռոմ. 9 դեկտ. (ն. տ.) Զրոյց է պըտտում որ Ամբօգալիում մաժօր Թոստիլին մի քանի պաշտօնեաների հետ ըսպանւել են: Իտալական պետութիւնը 40,000 զօրք է ուղարկել Աբեսսինեա:

Կ. Պօլիս. 10 դեկտ. Մի կայսերական իրադէ է հրատարակւել, հրամայելով որ պետութիւնների երկրորդ պահականաւերը ներս մտնեն Դարդանելից:

Կ. Պօլիս. 10 դեկտ. Սաիդ փաշան, որ ապաստանել էր անգլիական զեսպանտաւն մէջ, վերադարձել է տուն:

Լոնդոն. 10 դեկտ. Բրիտանական կառավարութեան վերջնագիրը վերջապէս յանձնւել է Վենեցուիլայի կառավարութեան զերմանացւոց զեսպանի միջոցով:

Բերլին. 11 դեկտ. Իշխան Հօհենլօէն ըէլխստագում խօսելով ասաց որ կառավարութիւնը վճռել է աւելի ուժեղ մի-

ջոցներ ձեռք առնել սոցիալիստների դէմ եղած օրէնքները խստացնելու համար:

Կ. Պօլիս. 11 դեկտ. Սաիդ փաշան, նախ քան մեկնելը զեսպանատնից, գրեց սրը Ֆիլիպ Բըրբրին տաւելով թէ քանի որ սուլթանը այդպէս կրկին անգամ ստիպել էր նրան, նա պարտաւորւած էր առկա թողնել իր Եւրոպա երթալու և առողջութիւնը վերականգնելու զիտաւորութիւնը, և վերադառնալ տուն ցոյց տալու համար թէ ինքը գնահատում է սուլթանի տաւած վստահութիւնները. սրանով ն. վ. յայտնում է թէ փաշան դեռ չէ գրկւած կայսերական շնորհներից: Նա, ինչ և իցէ, աւելացնում է որ իր առողջութիւնը իրան թող չը պիտի տայ նորից պաշտօն ըստանձնել:

Կ. Պօլիս 13 դեկտ. Մի յանկարծակի և խիստ խռովութիւն տեղի ունեցաւ, ծագելով մի մասնաւոր կուռի մէջ արձակւած ընկուկէրից. իրականութիւնը այն է, որ վերին աստիճանի գրգռում կայ այս կողմերում:—Երբ անգլիական «Իրիադ» պահականաւը անցաւ Դարդանելի մուտքի մօտ գտնւած ամրութիւններից, նշան տրւեց թնդանթով և թնդանթաձիգները իսկայն պատրաստ գտնւեցին թնդանթների մօտ: Դա նըշան էր, որ արթուն էին թիւրքերը իրենց պաշտպանելու համար:

Լոնդոն. 13 դեկտ. Զանազան աղբիւրներից նոր տեղեկութիւններ հասան, որ Հայաստանում մեծ թշուառութիւն է տիրում և հազարներով մեռնում են անպատասպար վիճակի մէջ ցըրտից և քաղցածութիւնից:

ՇԱԽԻՂԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բարձր ուշ. Տիւրացու Աւետիս Ազատեանին. ձեմարանի աշակերտ էք երկվում և այն էլ Կոստանեանցի սիրելի աշակերտներից: Հաջնում էք թէ ինչով է զբաղւած Խմբագրութիւնը. յամենայն դէպս նա զբաււած չէ ձեզ նըման անմիտների «բարի» խորհուրդները լսել վ: Բարիեցէք նոր Դարի կամ Արձագանքի դռները—ահա ձեր քառակուսի ուղեղին յարմար թերթեր, իսկ մեզ ազատեցէք ձեր վարպետական քարոզներից:

Սիւլիստը (Բուլգարիա) Մ. Դաւթեան. Ապառիկ թերթ չենք ուղարկում, փող կարող էք ուղարկել ուսաց թղթագրամով և կամ դիմել Ռուսչոք, մեր գործակալ պ. Փ. Հազլեանին:

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԵՍ ԲԵԿԱՅՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դարվազա Ղաղվինի դեկտ. 10-ի եկոյթի մասնախումբը յայտարարում է որ պարսկների մուտքը երեկոյթում բացարձակապէս արգելւած կը լինի, ուստի թող ոչ ոք իր տոմսակը նրանց չը տայ, այդպիսի տոմսակները պարսկների մօտ կը կորցնեն իրենց իրաւունքը: